KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
KASA FONDATION HUMANITAIRE SUISSE

Թումանյան 24, բն.5, 0001 Երևան Հայաստան
24, rue Toumanian, apt.5, 0001 Erévan Arménie
+374 10 58 40 32
kasaam@kasa.am / www.kasa.am

Հ Ր Ա Վ Ե Ր

21 դեկտեմբերի, 2017թ.

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը հայտարարում է Արտաքին աուդիտ իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ, «Երիտասարդների հզորացում քաղաքացիական կրթության և միջմշակույթային երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում ֆինանսական հաշվետվության աուդիտ իրականացնելու նպատակով: Ծրագրի տևողությունը երկու տարի է, որի ընթացքում իրականացվելու է չորս միջանկյալ աուդիտ:

Առաջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունը ներառում է 01.09.2017-28.02.2018թթ. ընթացքում իրականացված ծրագրային ծախսերը, իսկ միջնորդ ժամանակահատվածները կսահմանվեն հաղթող կազմակերպության հետ կնքվող պայմանագրում: Իրականացված աուդիտի տվյալները պետք է ամփոփվեն մինչև 31.03.2018թ:

Մրցույթի հայտերն ընդունվում են «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի վարչական գրասենյակում՝ ՀՀ քաղաք Երևան, Թումանյան 24, բն.5 հասցեում (սեղմելով մուտքի դռան 5B կոճակը)՝ 2017թ. դեկտեմբերի 22-ից մինչև 2018թ.-ի հունվարի 15-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 17:00-ն՝ առձեռն կամ փոստային ծառայության միջոցով, կնքված ծրարներով: Ուշադրություն՝ հիմնադրամի ոչ աշխատանքային օրերն են համարվում յուրաքանչյուր կիրակի և երկուշաբթի օրերը:

Ծրարը և դրանում ներառված փաստաթուղթը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակիցը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

Ծրարի վրա նշվում են՝

ա) մրցույթի կազմակերպիչի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

գ) մասնակցի կոնտակտային անձի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,

Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում՝ մրցույթի հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 15-րդ օրացուցային օրվա ժամը 17^{00}-ը, ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով:

Մրցույթին կարող են մասնակցել Անկախ աուդիտորական կազմակերպությունները, որոնք բավարարում են ՀՀ օրենքով սահմանված պահանջներին: Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն տեղեկատվություն՝

- աուդիտի ծառայության գինը, ներառյալ բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, վճարման կարգն ու պայմանները
- ներկայացվող փաստաթղթերի ցանկը և էջերի քանակը (լիցենզիա, կանոնադրություն և այլն)
- լրացուցիչ տեղեկություններ

Աուդիտի աշխատանքները պարունակում են.

1. Միջազգային ստանդարտներին համապատասխան կազմված միջանկյալ ֆինանսական հաշվետվության աուդիտ՝ աուդիտորական եզրակացությունն և "Նամակ ղեկավարությանը" փաստաթղթի ներկայացում:

2. Ֆինանսավորող կազմակերպության կողմից սահմանված պահանջներին համապատասխան աուդիտորական եզրակացություն :

3. Միջազգային ստանդարտներին համապատասխան կազմված աուդիտորական եզրակացությունն ու "Նամակ ղեկավարությանը" փաստաթղթերը պետք է կազմվեն հայերեն և անգլերեն լեզուներով:

Աուդիտն իր աշխատանքները իրականացնելիս պետք է անպայման ընդգրկի հետևյալը՝

Ա/ Տեղեկություն ստացված ֆինանսավորման նպատակային օգտագործման վերաբերյալ:

Բ/ Ծրագրի շրջանակներում իրականացված ծախսերի ՀՀ օրենսդրությանը և ֆինանսավորող կազմակերպության պահանջներին բավարարելու (կամ չբավարարելու) մասին տեղեկություն:

Մրցույթի հաղթող կճանաչվի աուդիտի անցկացման լավագույն մեթոդական, տեխնիկական, ֆինանսական և կազմակերպական պայմաններ առաջարկած մասնակիցը:

Հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպության հետ պայմանագիրը կկնքվի մինչև 2018թ. հունվարի 23-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

"ԿԱԶԱ" շվեյցարական մարդասիրական հիմնադրամ՝ ք. Երևան, Թումանյան 24, բն.5 կամ զանգահարել Հեռ.՝ (374 10) 58 40 32

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի տնօրեն՝
Ա. Մինասյան